# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<<12>>մայիսի 2017թ
N-29

ՀՀ Շիրակի մարզ,գյուղ Հովունի

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝**
**Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Սիմոնյան

Կից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Հովունիի համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 6-ի նիստի թիվ 10-Ն,11-րդ որոշումները և 2017 թվականի մայիսի 12-ի Նիստի թիվ 12-Ա,13-Ա,14-Ա,15 որոշումները:

Առդիր՝7թերթ:

Հարգանքով՝

ՀՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 4850-17
«05» 05 17թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Հովունի համայնք
ՀՀ Շիրակի մարզ գ.Հովունի 1-ին փողոց 11

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ն

<<06 >>մայիսի 2017 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 20-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1. Համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսային մասի՝

1) 11.1.2. ծրագրի 4891 <<Պահուստային միջոցներ>> հոդվածի <<841.7>> թիվը փոխարինել << 641.7>> թվով,
2 ) 4241 հոդվածի <<100.0 >> թիվը փոխարինել 300.0 թվով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ (3) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|
| ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՀԱՐՈՆ՝ | | | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ՝ | | | |
| ՄՈՒՐԱԴՅԱՆ ԻՍՐԱՅԵԼ՝ | | | |

ՀՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

<06>>մայիսի 2017 թվական
գ.Հովունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Հովունի համայնք
ՀՀ Շիրակի մարզ գ.Հովունի 1-ին փողոց 11

# ՈՐՈՇՈՒՄ

<<06>>մայիսի 2017թվական թիվ **-11**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթով .

Հովունի համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքում մայիսի 9-ի՝ հաղթանակի օրվա կապակցությամբ միջոցառում կազմակերպելու համար տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ ընդամենը 130000/ հարյուր երեսուն հազար/ դրամի չափով :

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ (3) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՀԱՐՈՆ՝ | [signature] | ________ | ________ |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ՝ | [signature] | ________ | ________ |
| ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽՍՐԱՅԵԼ՝ | [signature] | ________ | ________ |

ՀՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

<<06>>մայիսի 2017 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 12-Ա

«12» մայիսի 2017 թվական          գյուղ Հովունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.163101 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԶԱՐԶԱՆԴ ԵՐԱՆՈՍԻ ՂԱՆԴԻԼՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Ախուրյանի շրջանի Հովունի գյուղի աճուրդն անցկացնող հանձնաժողովի <<Իրացվող արտադրական նշանակության օբյեկների վաճառքի 1996 թվականի մարտի 28-ի ակտը>> և քաղաքացի Զարզանդ Երանոսի Ղանդիլյանի կողմից գնված հին մթերքի հացահատիկի պահեստի շենքի արժեքի վճարման դրամարկղի մուտքի 1996 թվականի մարտի 17-ի անդորրագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, քաղաքացի Զարզանդ Երանոսի Ղանդիլյանի կողմից աճուրդի արդյունքում գնված հին մթերքի հացահատիկի պահեստի շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի սեփականությանը համարվող 08-071-0042-0018 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,163101 հեկտար հողամասը (հասցեն՝ Հովունի համայնք 1-ին փողոց, 5-րդ նրբանցք թիվ 2/30) ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, 234870 (երկու հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Զարզանդ Երանոսի Ղանդիլյանին (անձնագիր՝ AG0399145, տրված 030-ի կողմից՝ 2004 թվականի դեկտեմբերի 23-ին, բնակության հասցեն՝ գյուղ Հովունի):
2. Հովունիի համայնքի ղեկավար Լևիկ Խարատրյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Զարզանդ Երանոսի Ղանդիլյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝ 3          Դեմ՝ 0          Ձեռնպահ՝ 0

ԱՀԱՐՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ________________

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ՝ կողմ ________________

ԻՍՐԱՅԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ՝ կողմ ___________________

ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«12» մայիսի 2017 թվական
գ. Հովունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 13-Ա

<<12>> մայիսի 2017 թվական          գյուղ Հովունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,149133 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-071-0042-0015 կադաստրային ծածկագրով 0,149133 հեկտար հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 02052017-08-0029, տրված՝ «2» մայիսի 2017 թվական) գյուղատնտեսական արտադրական օբյեկտի կառուցապատման նպատակով, օտարել աճուրդով:

2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝ 3          Դեմ՝ 0          Ձեռնպահ՝ 0

ԱՀԱՐՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝          կողմ ------------------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ՝          կողմ ------------------

ԻՍՐԱՅԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ՝          կողմ ------------------

**ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝          ԼԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

«12» մայիսի 2017 թվական
գ. Հովունի

ՀԱՎԵԼ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մ
Հովունի համայնքի ավագանու 2017 թվա
մայիսի 12-ի թիվ13.-Ն որո

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի սեփականությանը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և ա արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությա հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինն ու պայմանները**

| N | Հողամասի գտնվելու վայրը (հասցեն) | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափ-ակումների (ներառյալ` սերվիտուտների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ համայնքի բնակավայրերի նպատակային նշանակության մեկ հեկտար հողամասի կադաստրային արժեքը (դրամ) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ) | Հողամ աճուրդ վաճա մեկնարկ գինը կադաստ արժե նկատմա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հովունի համայնք, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, 2/24 հողամաս | 08-071-0042-0015 | 0.149133 | Արդյունաբերությա ն, ընդերքօգտագործ ման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների | Գյուղատնտե սական արտադրակ ան օբյեկտի կառուցապա տում | չկան | Աճուրդ | 1440000 | 107380 | 50.0 |

ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 14-Ա

«12» մայիսի 2017 թվական        գյուղ Հովունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,5 ԵՎ 0.277353 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-071-0042-0013 կադաստրային ծածկագրով 0,5 հեկտար (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 22022017-08-0009, տրված՝ «13» հուլիսի 2015 թվական) և 08-071-0042-0014 կադաստրային ծածկագրով 0.277353 հեկտար (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24022017-08-0022, տրված՝ «24» փետրվարի 2017 թվական) գյուղատնտեսական արտադրական օբյեկտի կառուցման նպատակով օտարել աճուրդով:

2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասերի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3        Դեմ՝ 0        Ձեռնպահ՝ 0

ԱՀԱՐՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝        կողմ ------------------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ՝        կողմ ------------------

ԻՍՐԱՅԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ՝        կողմ ------------------

ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ        ԼԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«12» մայիսի 2017 թվական
գ. Հովունի

ՀԱՎԵԼ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մ
Հովունի համայնքի ավագանու 2017 թվա
Մայիսի 12.-ի թիվ 14.-Ն որո

## Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունիի համայնքի սեփականությանը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և ա արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությա հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինն ու պայմանները

| N | Հողամասի գտնվելու վայրը (հասցեն) | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափ-ակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ համայնքի բնակավայրերի նպատակային նշանակության մեկ հեկտար հողամասի կադաստրային արժեքը (դրամ) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ) | Հողամ... աճուր... վաճա... մեկնար... գինը... կադաստ... արժե... նկատմա... |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հովունի համայնք, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, 2/18 հողամաս | 08-071-0042-0013 | 0.5 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների | Գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտի կառուցում | չկան | Աճուրդ | 1440000 | 396000 | 55.0 |
| 2. | Հովունի համայնք, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, 2/16 հողամաս | 08-071-0042-0014 | 0.277353 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների | Գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտի կառուցում | չկան | Աճուրդ | 1440000 | 219660 | 55.0 |

ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ՀՈՎՈՒՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Հովունի համայնք
ՀՀ Շիրակի մարզ գ.Հովունի 1-ին փողոց 11

# ՈՐՈՇՈՒՄ

<<12>>մայիսի 2017թվական թիվ **-15**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՀՈՎՈՒՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթով .

Հովունի համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Հովունի միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպությանը վերջին զանգի կապակցությամբ տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ ընդամենը 70000/ յոթանասուն հազար/ դրամի չափով /:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ (3) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՇԱՐՈՆ՝ | | | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ՝ | | | |
| ՄՈՒՐԱԴՅԱՆ ԻՍՐԱՅԵԼ՝ | | | |

ՀՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
<<12>>մայիսի 2017 թվական